ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ՀՀԱՆԴՄ-024

ք. Երևան **«24» հունվար 2024թ.**

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը (այսուհետ՝ Դրամաշնորհ տրամադրող)՝ ի դեմս գլխավոր քարտուղար Ս. Գևորգյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Արդարադատության ակադեմիա պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Դրամաշնորհ ստացող կամ Կազմակերպություն)՝ ի դեմս ռեկտոր Ս. Առաքելյանի, ով գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N2323-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), «Վերապատրաստման ծառայություններ» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Դրամաշնորհ տրամադրողը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ 249453.7 (երկու հարյուր քառասունիններ միլիոն չորս հարյուր հիսուներեք հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են Պայմանագրի հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Դրամաշնորհ տրամադրողն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Դրամաշնորհ ստացողի կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը՝ առանց միջամտելու նրա բնականոն գործունեությանը, պահանջել տեղեկատվություն կատարվող աշխատանքների վերաբերյալ:

2.1.2. Պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում սահմանել բացահայտված թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ:

2.1.3 Առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Դրամաշնորհ ստացողը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացնելու.

բ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին:

2.1.4 Դրամաշնորհ ստացողից պահանջել ներկայացնելու Ծրագրի կատարման վերաբերյալ եռամսյակային հաշվետվություններ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը և տարեկան ամփոփ հաշվետվություն՝ մինչև հաջորդող տարվա փետրվարի 7-ը:

2.2. Դրամաշնորհ ստացողն իրավունք ունի.

2.2.1.Պահանջել Դրամաշնորհ տրամադրողից սույն պայմանագրի 1.1. կետով սահմանված գումարը:

2.2.2 Դրամաշնորհ տրամադրողի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.2.3. Տեղեկացնել Դրամաշնորհ տրամադրողին սույն պայմանագրով նախատեսված գործունեության ընթացքում առաջացած խնդիրների մասին:

2.3. Դրամաշնորհ տրամադրողը պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել դրամաշնորհ ստացողին:

2.3.2 Իրականացնել Ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Դրամաշնորհ ստացողը պարտավոր է.

2.4.1.Կանոնադրությամբ սահմանված գործունեությունն իրականացնել ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով:

2.4.3 Կատարել Դրամաշնորհ տրամադրողի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները:

2.4.4 Դրամաշնորհ տրամադրողին ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ:

2.4.5 Պայմանագրի գործողության ընթացում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

2.4.6 Դրամաշնորհի պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո Կազմակերպությունը միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

3. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

3.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության և պայմանագրի կամ դրա մի մասի արդյունքների ընդունման վերաբերյալ եզրակացության ստորագրմամբ:

3.2 Եթե իրականացված Միջոցառումը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Դրամաշնորհ տրամադրողը Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Դրամաշնորհ ստացողին է տրամադրում իր կողմից ստորագրած հանձնման-ընդունման արձանագրությունը:

3.3 Եթե իրականացված Միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Դրամաշնորհ տրամադրողը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում Դրամաշնորհ ստացողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1 Իրականացվող միջոցառումների դիմաց Դրամաշնորհ ստացողին վճարումները կատարվում են անկանխիկ ձևով, ամսական կտրվածքով, ոչ ուշ, քան հաջորդ ամսվա 7-րդ աշխատանքային օրը՝ համաձայն ֆինանսական պարտավորությունների հատկացման ժամանակացույցի (հավելված)՝ հունվար ամսվա համար գումարը փոխանցվում է պայմանագրի կնքման օրվանից հետո հաջորդ երեք աշխատանքային օրերի ընթացքում:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով, ընդ որում, տուգանքի վճարումը Կենտրոնին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2024 թվականի հունվարի 3-ից հետո ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև 2024 թվականի դեկտեմբերի 30-ը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս-մաժոր)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե

դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են համաճարակը, երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Այլ պայմաններ

8.1 Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8.2 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումները ունեն իրավաբանական ուժ, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3 Սույն պայմանագրով կողմերը իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Դրամաշնորհի տրամադրող	**Դրամաշնորհի ստացող**
ՀՀ արդարադատության նախարարություն	«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/8	ք. Երևան, Փիրումյանների 9
ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն	ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ
Հ/Հ 900011474500	Հ/Հ 16043032235600
ՀՎՀՀ 02506264	ՀՎՀՀ 00129631
Գլխավոր քարտուղար՝ Ս. Գևորգյան	Ռեկտոր՝ Ս. Առաքելյան
(Ստորագրություն) Կ.Տ	(Ստորագրություն) Կ.Տ

Հավելված
« » հունվարի 2024թ.
Կնքված դրամաշնորհի № ՀՀԱՆԴՄ- / պայմանագրի

«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ի

2024 թվականի «1149. Արդարադատության համակարգի աշխատակիցների վերապատրաստում և հատուկ ուսուցում» ծրագրի «11002. Դատավորների, դատախազների, դատավորների ու դատախազների թեկնածուների ցուցակում գտնվող անձանց, դատական ծառայողների, դատախազության աշխատակազմում ծառայողների, դատական կարգադրիչների վերապատրաստման և հատուկ ուսուցման ծառայություններ» միջոցառման ֆինանսական հատկացումների ժամանակացույց

Հազար դրամ

Ծրագրի միջոցառման անվանումը	Ընդամենը տարեկան	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2024թ-ի պետական բյուջեից, ընդ որում											
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
Վերապատրաստման ծառայություններ	249,453.7	20,787.8	41,575.6	62,363.4	83,151.2	103,939.0	124,726.8	145,514.6	166,302.4	187,090.2	207,878.0	228,665.8	249,453.7

Դրամաշնորհի տրամադրող
ՀՀ արդարադատության նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն
Հ/Հ 900011474500

ՀՎՀՀ 02506264
Գլխավոր քարտուղար՝
Ս. Գևորգյան

(Ստորագրություն)
Կ.Տ

Դրամաշնորհի ստացող
«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ

ք. Երևան, Փիրումյանների 9

ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ

Հ/Հ 16043032235600

ՀՎՀՀ 00129631

Ռեկտոր՝
Ս. Առաքելյան

(Ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 1
2024 թ. հունվարի -ին
կնքված N _____ պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

		Իրականացվելիք միջոցառման			
անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնաժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
ռապատրաստման ռայություններ	1) դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում և դատախազների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց մեջ դատավորի կամ դատախազի պաշտոն զբաղեցնելու համար անհրաժեշտ հմտությունների ձևավորում, մասնագիտական գիտելիքների ընդլայնում 2) դատավորների, դատախազների, ինչպես նաև դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված՝ Ակադեմիայի շրջանավարտ անձանց, դատական կարգադրիչների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործում 3) դատավորների, դատախազների, դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում և դատախազների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց կրթական ծրագրերի աստիճանական մերձեցումը, համատեղ կրթական ծրագրերի իրականացում:	- որակավորման ստուգման արդյունքներով դատավորների թեկնածուների հավակնորդների, դատախազների թեկնածուների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման կազմակերպում և անցկացում, - դատավորների, դատախազների, դատավորների թեկնածուների ցուցակում գտնվող անձանց վերապատրաստում, - դատական կարգադրիչների վերապատրաստում - դատավորների, դատախազների և դատական կարգադրիչների հատուկ ուսուցման կազմակերպում՝ հատուկ միջոցների և հրազենի գործադրման ունակություններն ուսուցանելու նպատակով:	-ունկնդիրներին նեղ մասնագիտական աշխատանքի իրականացման համար գործնական հմտությունների ձևավորում, մասնագիտական գիտելիքների ընդլայնում, - աշխատանքային ունակությունների շարունակական կատարելագործում, -դատական իշխանության, դատախազության ունկնդիրների կրթական ծրագրերի աստիճանական մերձեցում, համատեղ կրթական ծրագրերի իրականացում, -դատավորի, դատախազի, կերպարի ձևավորում, ինչը ենթադրում է ոչ միայն մասնագիտական գիտելիքների և հմտությունների, այլև դատավորի, դատախազի, աշխատանքի իրականացման համար հարակից գիտելիքների և հմտությունների տրամադրում:	2024 թվականի դեկտեմբերի 31	249453700

ռնը

Դրամաշնորհի տրամադրող

ՀՀ արդարադատության նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն
Հ/Հ 900011474500

ՀՎՀՀ 02506264

Գլխավոր քարտուղար՝
Ս. Գևորգյան

(Ստորագրություն)
Կ.Տ

Դրամաշնորհի ստացող

«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ
ք. Երևան, Փիրումյանների 9
ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ

Հ/Հ 16043032235600

ՀՎՀՀ 00129631

Ռեկտոր
Ս. Առաքելյան

(Ստորագրություն)
Կ.Տ